



# ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՑԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՈՐՈՇՈՒՄ

28 օգոստոսի 2020 թվականի թիվ 82-Ա

ք. Երևան

**ԼՍՈՂԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՕՐԿԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԱԲԱՐ ԱՌՆՎԱԶՆ ՄԵԿԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ  
ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ ԺԵՍՏԵՐԻ ԼԵԶՎՈՎ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՄԲ ԿԱՄ  
ՀԱՅԵՐԵՆ ԵՆԹԱԳՐՈՎ ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ԵԹԵՐԱՅԻՆ ԺԱՄԵՐԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասով և 32-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել լսողական խնդիրներ ունեցող սպառողների համար օրվա ընթացքում համապատասխանաբար առնվազն մեկական մանկական և լրատվական տեսալսողական հաղորդումներ ժեստերի լեզվով թարգմանությամբ կամ հայերեն ենթագրով հեռարձակման եթերային ժամերը:

2. Տեսալսողական մեդիաձառայություններ մատուցողները, որոնք արտադրում են նաև մանկական և (կամ) լրատվական տեսալսողական հաղորդումներ, պարտավոր են իրենց ծրագրերում ապահովել լսողական խնդիրներ ունեցող սպառողների համար տեղեկատվության ընկալման մատչելիությունը՝ օրվա ընթացքում համապատասխանաբար առնվազն մեկական մանկական և լրատվական տեսալսողական հաղորդումների հեռարձակումը հետևյալ եթերային ժամերին.

1) մանկական տեսալսողական հաղորդումները ժեստերի լեզվով թարգմանությամբ կամ հայերեն ենթագրով պետք է եթեր հեռարձակվեն աշխատանքային օրերին ժամը՝ 16:00-ից մինչև 21:00-ն, իսկ հանգստյան օրերին՝ 10:00-ից մինչև 17:00-ն ընկած ժամանակահատվածում,

2) լրատվական տեսալսողական հաղորդումները ժեստերի լեզվով թարգմանությամբ կամ հայերեն ենթագրով պետք է եթեր հեռարձակվեն ժամը՝ 17:00-ից մինչև 22:00-ն ընկած ժամանակահատվածում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պատշաճ իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՑԻ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

**Տ. ՀԱԿՈԲՅԱՆ**

28 օգոստոսի 2020թ.

ք. Երևան